ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍԱՄԲ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 10 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացիներ Արարատ Ծովյանի եւ Սվետլանա Հակոբյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արարատ Ծովյանը եւ Սվետլանա Հակոբյանը 25.02.2010թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Պետական փուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «ա» եւ «բ» կետերի, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 70-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 210-րդ հոդվածի 4-րդ մասի, 226-րդ հոդվածի 1-ին կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 30-32-րդ եւ 69-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն գործը պետք է քննության ընդունվի մասամբ՝ հետեւյալ պատճառաբանություններով.

1. Դիմողների կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղ. դատ. օր-ի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի եւ 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. թիվ ՍԴՈ-690 որոշումը, ուստի գործի քննությունն այդ դրույթների մասով ենթակա է մերժման /նշված օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետ/:

2. ՀՀ քաղ. դատ. օր-ի 70-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի վերաբերյալ անհրաժեշտ է արձանագրել, որ հիշյալ նորմը որեւէ դատական ակտով դատարանների կողմից դիմողների նկատմամբ ակնհայտորեն կիրառված չէ /նշված օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետ/:

3. ՀՀ քաղ. դատ. օր-ի 210-րդ հոդվածի 4-րդ մասի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 226-րդ հոդվածի 1-ին կետի մասով եւս գործի քննությունը ենթակա է մերժման, քանի որ դիմողները ձեւականորեն վիճարկելով մատնաշված նորմերի սահմանադրականությունը, ըստ էության առաջադրում են դատարանի կողմից դրանց կիրառման իրավաչափության խնդիրը: Բացի դրանից, դիմողների կողմից պատշաճ մակարդակով հիմնավորված չէ, թե իրենց սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պատճառահետեւանքային կապ է առկա վիճարկվող իրավանորմերի եւ իրենց իրավունքների խախտման փաստի միջեւ /ՀՀ ՍԴ 17.03.2009թ. ՍԴԱՈ-17 որոշման 8-րդ կետ/:

4. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «ա» եւ «բ» կետերի մասով գործի քննությունը մերժելու օրենքով նախատեսված հիմքերը բացակայում են:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացիներ Արարատ Ծովյանի եւ Սվետլանա Հակոբյանի անհատական դիմումով գործը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «ա» եւ «բ» կետերի մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Սույն դիմումով՝ ՀՀ քաղ. դատ. օր-ի 70-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 210-րդ հոդվածի 4-րդ մասի, 226-րդ հոդվածի 1-ին կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի մասով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

10 մարտի 2010 թվականի
ՍԴԳՈ/2-9